

սակայն տարաբախտաբար մեծ մասամբ կը մնայ ազէտ ու ազանդամուլ, և ոգի ի բռին կը պայքարի կաթողիկէ քարոզիչներուն դէմ, մասնաւորապէս կաշառքով և զըրպարուութեամբ (12): Առաքել Գաւրիժեցի նկարագրելով իր ժամանակին եկեղեցականներուն անկեալ վիճակը, կը յայտարարէ. «Սոցին ամենեցուն առ իք ոչ այլ ինչ, երբ ոչ հեռացումն ի Ս. Գրոց եւ յերկիրդեմ Ասուծոյ» (13):

Կղերէն աւելի ազանդամուլ են, երբեմն, աշխարհականները. Հ. Պօղոս Բիրումալի՝ Ս. Աթոռին զրկած իր երկար մէկ տեղեկատուութեան մէջ (1654), նկարագրելէ հոք իր կրած հալածանքներն ու չարչարանքները Սիմոն Զուղայեցի վարդապետին գրողումով, այսպէս կը ներկայացընէ Զուղայեցիներու մեծամասնութեան հակառակութիւնը՝ ընդդէմ կաթողիկէութեան. «Անոնք կ'ըսեն՝ թէ Ս. Հոսովէական եկեղեցին նզովուած է և անիծուած, և ամէն անոնք որ կը միանան անոր, նզովուած և անիծուած են հաւասարապէս... Երբ լսեն՝ թէ մէկը հակում կը զգայ կաթողիկէ ըլլալու, ամէն հնարք ի գործ կը դնեն, և նոյնիսկ զայն կը ձեծեն, որպէսզի հրաժարի իր ծրագրէն. և ցմահ կը հալածեն

(12) Լեո, Անդ. P. de Damas, Անդ. 114, 142—143:

(13) Առաքել Գաւրիժեցի, Պատմ. Էջմիածին, 1884, էջ 231: